

տնտեսական-ընկերային եւ քաղաքական պայմանները հիմնովին փոխուած չեն ի նպաստ բանուորական-ընկերվարական շարժման մը :

Ահա այս նկատումները հիմք ունենալով, ես ըսած էի այն ատեն, թէ բոլոր փորձերը ընկերային եւ ընկերվարական տեսակէտով բիւրեղացման ենթարկելու Հ. Յ. Դաշնակցութիւնը անիմաստ, ապարդիւն եւ նոյնիսկ վնասակար են. որովհետեւ այդպիսի բիւրեղացում մը բռնագրովի գործ է, քանի զեռ մեր երկրի ընկերային-տնտեսական իրականութիւնը ինքը բիւրեղացած չէ : Առողջ եւ շինարար քաղաքականութիւնը կը պահանջէ, որ կուսակցական բիւրեղացումը բղխի իրականութենէն եւ ոչ թէ, պարտադրուի վաղաժամօրէն եւ բռնի միջոցներով, — բան մը, որ անխուսափելիօրէն պիտի քանդէ, կազմալուծէ կենդանի եւ գործօն ուժերը ի վնաս մերձաւոր նպատակներու եւ յանուն հեռաւոր ու թերեւս ցնորական գաղափարներու :

Այս հարցերը արծարծելէն յետոյ անցեր են ամբողջ տասներկու տարիներ, որոնց ընթացքին, մեր ժողովուրդը, ինչպէս եւ համայն աշխարհը, ապրեցաւ հակայական փոթորիկներ ու վերիվայրումներ : Եւ սակայն նոյն խնդիրները մինչեւ այսօր ալ չեն կորսնցուցած մեզի համար իրենց բովանդակ այժմէականութիւնը եւ շահեկանութիւնը : Ընդհակառակը, նոյնիսկ աւելի հրատապ, աւելի հրամայական են դարձած :

Ոչ միայն պատմական զգայացունց դէպքերը, այլ եւ աւելի սերտ, աւելի դրական չիտումը մեր երկրի ու ժողովուրդի հետ հայ մտաւորականութեան բաւականաչափ նոր նիւթ մատակարարեցին, որպէսզի նորանոր անգամներ լուրջ եւ աւելի արդիւնաւոր վերագնահատութեան ենթարկուին մեր քաղաքական ըմբռնումներն ու սկզբունքները : Այդպիսի վերագնահատութեան մը ստիպողական անհրաժեշտութիւնը կը զգացուէր միշտ, իսկ այժմ աւելի, քան երբ եւ է, ե՛ւ այն պատճառով, որ մեր քաղաքական կեանքի մէջ իշխող գաղափարներու մեծագոյն մասը օտար միջավայրերու, բայց ոչ երբեք մեր հայրենիքի յետամնաց իրականութեան արդիւնք եւ թելադրութիւն է :

Մեր մտաւորականութիւնը, որ գերազան-

ցապէս սնուեր ու մեծցեր է գաղութներու քաղաքական միջոցառումն մէջ, ներշնչուեր է այդ օտար միջավայրերու առաջաւոր գաղափարներէն, յաճախ անվերապահօրէն իւրացուցեր է զանոնք եւ տիրական թափով մը մղուեր է հետապնդելու զանոնք նաեւ հեռաւոր հայրենիքի տխուր պայմաններուն մէջ, առանց նկատի առնելու, թէ ո՞րքան խորն է տարբերութիւնը օտար եւ հայրենի միջավայրերուն եւ ո՞րքան ուրեմն խորթ ու ցնորական են մեր երկրի համար գաղութային մտայնութիւնները, գաղափարները, նշանաբանները, որպէսզի անոնք կարողանան իբրեւ հիմք ծառայել մեր քաղաքական ծրագրերներու համար :

II

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հայ Յեղափոխական Դաւանակցութիւնը իր ծագման առաջին շրջանին մէջ եղած է իրօք հայ յեղափոխականներու Դաւանակցութիւն :

Միացնել մէկ կազմակերպութեան մէջ բոլոր հայ յեղափոխականները՝ անկախ անոնց աշխարհահայեցողութիւններէն, եւ հաւանքով բոլոր հայ յեղափոխական խմբակները մէկ ընդհանուր գործնական նպատակի շուրջը, որ էր քրքահայ ժողովրդի ազատագրութիւնը, — ահա գլխաւոր հիմքը Հ. Յ. Դաշնակցութեան :

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրները դոկտրինեորներ, նեղ դաւանապաշտներ չէին : Ընդհակառակը, անոնք ունէին քաղաքական առողջ եւ գործնական ոգի մը, որ միշտ զիտէր ստորագասել հեռաւոր, տակաւին անորոշ նըպատակները մերձաւոր, արդէն որոշ նպատակներուն, վերացական սկզբունքները՝ կեանքի իրական պահանջներուն : Լինելով ուրեւ ընկերվարական շարժման բովէն դուրս եկած յեղափոխականներ ու սոցիալիստներ, անոնք սակայն չկամեցան ընկերվարական նորագոյն հասկացողութեանց ու գործելակերպերու վերայ խարսխել հայ քաղաքական յեղափոխութիւնը : Այդ պատճառով ալ անոնք խուսափեցան հիմնաւորել ու ծանրաբեռնել Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական ծրագրերը սոցիալիս-